ՀԱԿՈԲ Ա ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՅՈՒՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (918–958 թթ.)

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջնադարյան հայ սկզբնաղբյուրները ուշագրավ տեղեկություններ են հաղորդում IX դարի վերջին և X դարի առաջին կեսին աթոռակալած Սյունյաց հոգևոր առաջնորդների մասին: Սյունյաց եպիսկոպոսության գավազանագրքում այդ շրջանում իր գործունեությամբ առանձնանում է Հակոբ Ա եպիսկոպոսը: Վերջինս հայ եկեղեցական պատմագրության մեջ արժանացել է հակասական գնահատականների՝ ծայրահեղ վտանգավորից մինչև իմաստունն ու հանճարեղը: Մի շարք հեղինակների երկերում նա հորջորջվում է «ապստամբ», «հերձուածող» «խռովարար» մականուններով[1]: Մեղադրվում է նույնիսկ Թոնդրակյան շարժմանը և քաղկեդոնականությանը հարելու մեջ: Մեկ այլ տեղ էլ մեծարվում է «այր անձնեայ և սեգ, բնութեամբ ազատ և բանիւ ճոխ, հանճարով պայծառ» խոսքերով[2]: Անշուշտ, մատենագիրը իր խոսքում նման շռայլություն թույլ չէր տա մի անձնավորության նկատմամբ, ով արժանի չէր դրան: Հակոբ եպիսկոպոսը պատմիչների ոչ միարժեք գնահատականներին է արժանացել վճռական, եռանդուն, համարձակ բնավորության, նաև կազմակերպական ու շինարարական անուրանալի տաղանդի համար:

Տեր Հակոբը Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսի (898–929) ազգականներից էր՝ եղբորորդին[3]: Նա Դվինից էր և մինչև Սյունյաց մետրոպոլիտական աթոռի հովվապետ ձեռնադրվելը ծառայում էր Դվինի կաթողիկոսարանում որպես սենեկապետ, կաթողիկոսի գործակալ և համարվում էր շարքային կրոնավորների ավագ: Ստ. Օրբելյանը

---

[1] *Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, գլ. ԾԱ, էջ 200, 201, գլ. ՀԱ, էջ 364, Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն հայոց (այսուհետև՝ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի), աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 86, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 89, Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից.– «Արարատ», 1897, թիվ Գ, էջ 130, 132, 141:*

[2] *Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 201:*

[3] *Տե՛ս նույն տեղում, գլ. ԽԸ, էջ 184, Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 130:*

նրան բնութագրում է որպես արտաքին ակնառու բարեմասնություններ և հարուստ ներաշխարհ ունեցող անձնավորություն. «Այր բարձրահասակ և գեղեցկատեսիլ, հանճարեղ և իմաստուն քաղցրաբարոյ և հեզամիտ, լի ամենայն առաքինութեամբ»[4]: Սյունյաց գահերեց իշխան Սմբատի[5] խնդրանքով Հակոբը մետրոպոլիտ է ձեռնադրվել հենց Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի կողմից 918 թ. և աթոռակալել է մինչև 958 թ.[6] ՝ այդ պաշտոնում փոխարինելով Տեր-Հովհաննեսին[7]:

Սյունյաց տան պատմիչը հանգամանորեն շարադրում է տեր Հակոբի վարած թե՛ կրոնադավանաբանական քաղաքականության, թե՛ շինարարական և տնտեսական գործունեության մանրամասները: Միջնադարյան հայ մյուս մատենագիրներն անդրադարձել են Հակոբին գերազանցապես ծիսական, դավանանքային խնդիրներ հարուցելու, Սյունյաց աթոռի անջատողական ձգտումները մարմնավորելու տեսանկյունից:

IX դարի վերջերից թուլացել էին կապերը հայրապետական աթոռի և ծայրամասային թեմերի միջև: Հայոց Արևելից կողմանց և Սյունյաց աթոռները ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, և դրանց միաբանված գործունեությունը սպառնալիք էր ստեղծել հայ եկեղեցու միասնականության և ամբողջականության համար:

Խախտելով ավանդույթը և գործող կարգը՝ Սյունյաց մետրոպոլիտ Հակոբ Ա-ն ձեռնադրության, մեռոնի և օծման համար այլևս չէր գնում հայոց կաթողիկոսանիստ: Այդ ամենը նա ստանում էր Աղվանքի կաթողիկոսարանից: Սյունյաց մետրոպոլիտության և Աղվանից եկեղեցու միջև այս հարաբերություններն ընդգծված սերտացան 930-ական թվականներին Աղվանքի Սահակ կաթողիկոսի[8] և նրա հաջորդ Գագիկի օրոք: Սյունիքի և Աղվանքի եկեղեցական միաբանությունը բացահայտ

---

[4] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԽԸ, էջ 184:*

[5] *Սմբատը (մոտ 910–958 թթ.), ում Ղ. Ալիշանը □Մեծ□ մակդիրով է որակում, գահերեց իշխան Աշոտի որդին էր՝ Սահակ իշխանի եղբայրը (տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսական, Վենետիկ, 1893, էջ 17, Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԸ, էջ 232–233):*

[6] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԽԸ, էջ 184, գլ. ՀԱ, էջ 364:*

[7] *Ըստ Սյունիքի եպիսկոպոսական գավազանագրքի՝ Հովհաննես 5-րդ եպիսկոպոսը վերակառուցել է Տաթևի վանքը և աթոռակալել է 885–918 թթ. (տե՛ս Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, սյունակ 1244, Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 456, ծան. 487): Ըստ Ղ. Ալիշանի՝ Հովհաննեսը հովվել է 882–918 թթ. (տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 20):*

[8] *Սահակը աթոռակալել է 928–947 թթ. (տե՛ս Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի պատմություն, էջ 480, ծան. 792):*

էր: Ստ. Օրբելյանը առանձին գլուխ է նվիրել այս խնդրին՝ փորձելով համակողմանիորեն ներկայացնել ստեղծված իրավիճակը. «Էր կաթողիկոս յԱղուանս Սահակ անուն, որ հոգևորական սիրոյ կապակցութեամբ յարակցեալ էր տեառն Յակոբայ. և էին միմեանց համախոհ և յոյժ մերձաւոր: Եւ յետ Սահակայ յաջորդէր Գագիկ՝ եղբայր նորին. և սա առաւել ևս համարձակեալ էր՝ ի սէր միաբանութեան ընդ Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի»[9]: Ակնհայտ էր նաև նրանց մեկուսանալը Հայոց կաթողիկոսությունից[10]: Այս իրողությունն առավել ակնառու դարձավ այն ժամանակ, երբ նոր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ ժողով գումարվեց: Անանիա Մոկացին հատուկ գրությամբ, ի թիվս այլ նշանավոր հոգևոր գործիչների, Աղվանից Սահակ կաթողիկոսին և Սյունյաց Հակոբ եպիսկոպոսին նույնպես հրավիրեց ներկայանալ այդ կարևոր ժողովին: Սակայն նրանք հրաժարվեցին մասնակցել նոր կաթողիկոսի ընտրությանը և պատասխան նամակով հայտնեցին, որ թագավորներն ու եպիսկոպոսներն ում որ ընտրեն Լուսավորչի գահին, իրենք պատրաստ են ծառայել. «Իսկ նա յամառեալ, պնդեալ կաշկանդեալ. և ոչ հաւանէին զալ ի միութիւն ժողովոյն, այլ միայն իւրաքանչիւր ձեռնագրով գրէին, թէ հաւանեալ եմ ես Սահակ Աղուանից կաթողիկոս և սա՝ Յակովբ Սիւնեաց եպիսկոպոս՝ զով և դուք քրիստոսապսակեալ թագաւորքդ և սուրբ եպիսկոպոսունքդ ձեռնադրէք յաթոռ սուրբ Լուսաւորչին՝ ծառայել: Եւ զգալն հրաժարեալ՝ պատճառէին բարանայ բարուրս ստայօդ զօդակապութեամբ»[11]: Մ. Օրմանյանը նկատում է, որ Սյունյաց Հակոբ մետրոպոլիտը շեղվեց ավանդական ուղուց՝ Աղվանքի Սահակ կաթողիկոսի թելադրանքով[12]:

---

[9] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 200: Տե՛ս նաև Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 131:*

[10] *Այս վիճակը ձևավորվել է Գևորգ Բ Գառնեցի (877–897 թթ.) կաթողիկոսի վախճանվելուց հետո և շարունակվել է հաջորդ հինգ կաթողիկոսների՝ Մաշտոց Ա Եղիվարդեցու (897–898 թթ.), Հովհաննես Ե Դրասխանակերտցու (898–929 թթ.), Ստեփանոս Բ Ռշտունու (929–930 թթ.), Թեոդորոս Ա Ռշտունու (930–941 թթ.) հայրապետության ժամանակ (տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 201): Առանց կաթողիկոսների անունները հիշատակելու այս փաստը իր նշանավոր թղթում հաստատում է նաև Անանիա Մոկացի կաթողիկոսը՝ ասելով, որ այդ վիճակը տևել է 69 տարի. □Տևեալ ապստամբութեամբ զամս ԿԹ. և զժամանակս հայրապետաց հնգից, մինչև ի մեր նուաստութիւնս□ (Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 139):*

[11] *Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 131: Այս մասին տե՛ս Ա. Զ ա մ ի ն յ ա ն. Հայոց եկեղեցու պատմություն, Նոր-Նախիջևան, 1908, էջ 166:*

[12] *Տե՛ս Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, սյունակ 1269:*

Շարունակելով այդ մասին խոսել՝ Օրբելյանը բերում է որոշ արդարացնող հանգամանքներ՝ ասելով, որ արաբների մշտական ավազակային հարձակումների վտանգի պայմաններում հայոց կաթողիկոսներն աստանդական կյանք էին վարում և չունեին կայուն աթոռանիստ. «Երբեմն բնակէին առ Գագկայ թագաւորին՝ ի Վասպուրական՝ ի Վանայ ծովն, ուր կայր սեղանն և աթոռն և գաւազանն սրբոյն Գրիգորի, երբեմն բնակէին ի Շիրակ գաւառի առ Շիրակաւանին՝ ի վանս Արգինայի»[13]: Մշտական նստավայրի բացակայության և հեռավորության պատճառով ամեն տարի Սյունյաց մետրոպոլիտը չէր կարողանում այցելել հայոց կաթողիկոսին և նրանից ստանալ մեռոն. «Այս Յակոբ վասն հեռաւորութեան ոչ կարէր ամ յամէ երթալ առ կաթողիկոսն Հայոց և առնուլ մեռոն. ապա հարկ եղն խնդրել զմեռոն՝ ի կաթողիկոսէն Աղուանից»[14]: Պատմիչի խոսքերից կարելի է եզրակացնել, որ հայոց թեմական առաջնորդները պարտավոր էին տարին մեկ կամ մի քանի անգամ գնալ կաթողիկոսի մոտ: Դա դիտվում էր իբրև հպատակության նշան, դյուրացնում էր հարաբերությունները հայրապետական աթոռի հետ և, ի վերջո, նպաստում Հայոց եկեղեցու նվիրապետական կարգի ամրապնդմանը: Ստ. Օրբելյանը, անշուշտ, չի արդարացնում իր հայրենակցին՝ գտնելով, որ ինչքան էլ պատճառներ լինեին, դրանք չպետք է էական դեր խաղային և խաթարեին ավանդական հարաբերությունները: Սակայն Հակոբի անձնական մղումներն ավելի շեշտվեցին, և նա մեծամտացավ՝ դառնալով ինքնահավան և գոռոզ: Եկեղեցական մատենագրությունը շեշտված մեղադրանքով է խոսում Հակոբ եպիսկոպոսի մասին: Գանձակեցին արձանագրում է, որ Հակոբը շեղվել է հնավանդ ուղուց և նորամուծություններ է անում հայոց դավանաբանության մեջ, փորձում բարենորոգումներ կատարել նվիրապետական կառուցվածքում. «Յաւուրս սորա (Անանիա Մոկացի կաթողիկոսի – Վ. Ա.) է՛ր եպիսկոպոս մի կողմանցն Սիւնեաց, Յակոբ անուն, որ սկսաւ նորաձևութիւնս առնել խօսից և կարգաց»[15]: Վերջինս և իր համախոհները[16] գտնում էին, որ եպիսկոպոսը պարտավոր չէ ենթարկվել կաթողի-

---

[13] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 200: Ստ. Օրբելյանը մեջբերում է Սողոմոնի ասույթներից մեկը, թե իմաստունն էլ քուն ունի՝ սրանով անուղղակի մեծարելով Հակոբին (տե՛ս նույն տեղում, էջ 201):*

[14] *Նույն տեղում: Հմմտ. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 89:*

[15] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 85:*

[16] *Գանձակեցին հիշատակում է Հակոբի համախոհներից մեկին, ում անունն էր Խոսրով (տե՛ս Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 85): Ստ. Օրբելյանը հստակեցնում է, որ դա եղել է Խոսրով Անձևացին: Նա Գրիգոր Նարեկացու հայրն է՝ Անձևացեաց նշանավոր եպիսկոպոսը (տե՛ս Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի պատմություն, էջ 480, ծան. 794): Մ. Չամչյանցը նույնպես Հակոբի համախոհներից է համարում ոմն Խոսրովի, որին, սակայն, հիշատակում է իբրև քորեպիսկոպոս (տե՛ս Մ. Չ ա մ չ յ ա ն ց. Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 828, հմմտ. Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն.*

կոսին, քանի որ նրա գերագահությունը ավելի շատ անվանական է, քան գործնական, այսինքն՝ կաթողիկոսությունն անվանակոչություն է և ոչ նվիրապետական կարգ, հետևաբար, կաթողիկոսը իշխանություն չունի եպիսկոպոսի նկատմամբ[17]: Պատմիչը գրում է. «Ո՛չ է պարտ եպիսկոպոսի ընծայաբեր լինել եպիսկոպոսապետի, այսինքն՝ կաթողիկոսի, զի աւելի օրհնութիւն ո՛չ ունի, ասէ, բայց միայն զանուանակոչութիւնն»[18]: Գանձակեցու խոսքերի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ Սյունյաց և հայրապետական աթոռների միջև խախտվել էին ավանդաբար գործող տնտեսական հարաբերությունները. Հակոբը հրաժարվում էր «ընծայաբեր» լինել, այսինքն՝ հրաժարվում էր վճարել հայրապետական աթոռի հարկը՝ տասանորդը, որը ի վերուստ գործել է հայ եկեղեցում: Սա վկայում է, որ Հակոբի չներկայանալը հայոց կաթողիկոսարան պայմանավորված էր ոչ միայն մշտական նստավայրի բացակայությամբ կամ աշխարհագրական հեռավորությամբ, այլև թելադրված էր տնտեսական գործոններով: Ակնհայտ է, որ նահանգային հոգևոր առաջնորդի «ընդվզումը» ուներ նաև տնտեսական շարժառիթ[19]: Եկեղեցական տասանորդի և պտղիի կանոնավոր վճարումները բավականաչափ խախտվեցին Թոնդրակյան շարժման գաղափարների ազդեցությունից[20]:

Ձևավորվել էր այնպիսի մի կացություն, երբ դարերով սրբագործված հայ եկեղեցու նվիրապետական կարգին վտանգ էր սպառնում: Իրատեսորեն գնահատելով ստեղծված կացությունը՝ Հայոց հայրապետ Անանիա Մոկացին (946–968 թթ.) առանց հապաղելու ձեռնամուխ եղավ իրավիճակի գործնական կարգավորմանը[21]: X դարում Հայաստանում քաղաքական միասնական համակարգի բացակայության պայմաններում Հայոց կաթողիկոսության համար առանձնահատուկ կարևորություն ստացավ եկեղեցական և կրոնադավանաբանական միասնության խնդիրը: Հայոց կաթողիկոսը շատ լավ հասկանում էր, որ հայ եկեղեցու

Ստորագրութիւն հին Հայաստանից, Վէնէտիկ, 1822, էջ 245): Ըստ Գ. Տեր-Մկրտչյանի՝ Խոսրով Անձևացին ապստամբել է Անանիա Մոկացու դեմ 954 թ. (տե՛ս Գ. Տեր-Մկրտչեան. Անանիա Մոկացի.– «Արարատ», 1897, թիվ Բ, էջ 93, 94):

[17] *Տե՛ս Եղնիկ Պետրոսյան. Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա, Հաղբատավանք, 1990, էջ 76:*

[18] *Կիրակոս Գանձակեցի, էջ 85–86:*

[19] *Տե՛ս Լ. Սարգսյան. Հայաստանի նվիրատվական արձանագրությունները IX–XIV դդ., Երևան, 2007, էջ 22:*

[20] *Տե՛ս Բ. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում 9–13-րդ դդ., հ. 2, Երևան, 1964, էջ 123:*

[21] *Ըստ Սամուել Անեցու՝ Անանիա Մոկացին աթոռակալել է 22 տարի, որից հինգ տարին նստել է Աղթամարում, իսկ 17-ը՝ Վարագում (տե՛ս Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 99–100, հմմտ. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 89):*

ամբողջականությունը և միակենտրոն ուղղահայացը կարելի էր վերականգնել միայն հայոց հայրապետի գերագահությունն անվերապահ ընդունելու դեպքում: Եռանդուն ու գործունյա Անանիա կաթողիկոսը, ում անունը գովեստով է հիշում ժամանակակից պատմիչը[22], պատվիրակների միջոցով իր մոտ հրավիրեց համախոհներ Սահակին և Հակոբին: Կաթողիկոսը նպատակ ուներ հորդորներով և նրանց հետ բանակցելով՝ խնդիրը լուծել: Սակայն վերջիններս անհիմն պատճառաբանություններով հրաժարվեցին ներկայանալ: Այդ ժամանակ Անանիան վճռեց անձամբ ուղևորվել Սյունիք. «Եւ սաստիկ ցասմամբ շարժեալ՝ եկն ի խնդիր Յակոբայ, զի կամ հնազանդեսցէ և ըստ կամի արասցէ, և կամ մեծագոյն պատիժս ընկալցի և անտի դէմ եդեալ երթիցէ յԱղուանս՝ի զայն ևս հնազանդել»[23]: Նրա առաջին այցը Սյունիք տեղի էր ունեցել աթոռակալման հենց առաջին տարում՝ 946 թվականին: Սյունիքում Անանիա հայրապետին մեծ շուքով դիմավորեցին և Տաթևի եպիսկոպոսարան ուղեկցեցին Սիսական Սմբատ և Բաղքի Ջևանշեր[24] իշխանները: Այդտեղ մեղայականով ներկայացավ տեր Հակոբը, զղջում հայտնեց իր քայլերի համար և հնազանդության խոստում տվեց. «Ո՞վ - մեծապատիւ տէր կաթողիկոս՝ որովհետև աստուածաբար ի մեզ խոնարհեցար և զմեր յանդգնութիւնս անտես արարեր, հնազանդիմք ձեզ և սուրբ աթոռոյն Գրիգորի լուսաւորչին իբրև Աստուծոյ. մեղաք յերկինս և առաջի քո, և դու ներելով թող մեզ զյանցանս մեր»[25]: Անանիան միանգամայն գոհ մնաց ձեռք բերածից: Հանգամանքների բերումով[26] չկարողանալով շարունակել ճանապարհը դեպի Աղվանք՝ կաթողիկոսը վերադարձավ իր աթոռանիստ:

Սակայն, իհարկե, այդքան դյուրին չէր միայն խոստումներով և խոսքերով հարթել ստեղծված բարդ կացությունը: Խնդիրն այնքան էր խորացել, որ պահանջում էր տնական բանակցություններ և հետևողա-

---

[22] *Ստեփանոսը Անանիային բնութագրում է որպես «ամենեքեանիկ սրբութեամբ գերապատուեալ, բարեշնորհ իւրոց վիճակելոցն» (տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 173):*

[23] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 201: Հմմտ. Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 131:*

[24] *Բաղքը Սյունիքի 9-րդ գավառն էր: X–XII դարերում կոչվել է նաև Բաղաց աշխարհ՝ ներառելով Զորք, Կովսական և Արևիք գավառները: Բաղաց իշխան Ջևանշերը Զագիկ 3-րդ իշխանի որդին էր:*

[25] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 202: Հմմտ. Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 132:*

[26] *Անանիա Մոկացին դեռ Սյունիքում էր, երբ հայոց Աբաս (928–953 թթ.) թագավորի կողմից լուր ստացվեց, որ թագուհին վախճանվել է: Հայոց կաթողիկոսը պարտավորված զգաց մասնակցել թագուհու հուղարկավորությանը, այդ պատճառով Սյունիքից անմիջապես վերադարձավ Շիրակ՝ Արգինա:*

կան աշխատանք: Կաթողիկոսի հեռանալուց որոշ ժամանակ անց Հակոբը շարունակեց նախկին ընթացքը. դաշնակցել Աղվանքի կաթողիկոսի հետ՝ անտեսելով հայրապետական աթոռի գերագահությունը: Այս իրողությունը հաստատվում է Անանիա կաթողիկոսի՝ Սյունիք կատարած երկրորդ այցի փաստով: 949 թ. Անանիա Մոկացին, իր հետ վերցնելով «զբազմութիւն սուրբ եպիսկոպոսաց և սուրբ հարանց և գիտնաւոր վարդապետաց», կատարում է երկրորդ ճանապարհորդությունը նախ Աղվանք, ապա՝ Սյունիք[27]: Այս անգամ Հակոբը չհամարձակվեց ներկայանալ կաթողիկոսին և ապավինեց Ջևանշեր իշխանի պաշտպանությանը Բաղաբերդում: Բազմաթիվ նամակներով և գրագրություններով կաթողիկոսը փորձում է նրան իր մոտ բերել և հարթել խնդիրը: Այդ ճանապարհով արդյունքի չհասնելով՝ Խաչեն գավառի Արդախ[28] բնակավայրում նա ժողով է գումարում: Ժողովը եղել է օրինական և եկեղեցական ժողովների գումարման կարգին համապատասխան և, ինչպես գրավոր սկզբնաղբյուրներն են վկայում, նաև բավական ներկայացուցչական: Հրավիրված են եղել Սյունյաց թեմի երկու եպիսկոպոսներ. ժողովականների ցանկում վեցերորդը հիշատակվում է Նորավանից վանական հայր Գրիգորեսը, տասնմեկերորդը՝ Մաքենոցաց եպիսկոպոս տեր Հովհաննեսը[29]: Ժողովի օրակարգի գլխավոր հարցը, անկասկած, խնդրո առարկա հոգևորականների վարքագծի քննությունն էր: Նրանց նկատմամբ ընդունվել են պատժական որոշումներ. պաշտոնանկ են արվել թե՛ Սյունյաց եպիսկոպոսը և թե՛ Աղվանից Գագիկ կաթողիկոսը: Սակայն հայոց կաթողիկոսի ժողովական որոշումները չեն գործադրվել: Պատճառն այն էր, որ և՛ Հակոբ եպիսկոպոսը, և՛ Գագիկ կաթողիկոսը վայելում էին իրենց նահանգների քաղաքական իշխանությունների անվերապահ գորակցությունն ու հովանավորությունը: Նրանք շարունակել են պաշտոնավարել ևս ինը տարի: 949–950 թթ. ձմռանը կաթողիկոսը վերադառնում է Արգինա, սակայն չի դադարում թղթերով և գրություններով նրանց հնազանդեցնելու իր փորձերը. «Եւ սկսեալ յայսմհետէ և յապա բազում ջանիւք և անբաւ թղթագնացութեամբ հնարէաք և զօրհանապազ զարտօսրաթոյր վտակս

---

[27] *Տե՛ս Գ. Տեր-Մկրտչեան. Անանիա Մոկացի.– «Արարատ», 1897, թիվ Բ, էջ 92: Հմմտ. Ա. Զամինյան. նշվ. աշխ., էջ 168:*

[28] *Պատմաբան Վ. Վարդանյանը գտնում է, որ Արդախ բնակավայրը գտնվել է Սյունիքի Ճահուկ գավառում (տե՛ս Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002, էջ 49): Իսկ Բ. Ուլուբաբյանը, որպես աղբյուր ունենալով ակադեմիկոս Բ. Պիոտրովսկուն, Արդախը նույնացնում է Արցախ աշխարհի հետ. այն Արցախի սեպագրային անվանումներից է (տե՛ս Բ. Ուլուբաբյան. Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 6, 166):*

[29] *Տե՛ս Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 134:*

և զաղերսալի հառաչանս ի ժամ պատարագին առաջի զենլոյն Քրիստոսի հեղուլ: Եւ լինէր այս ի թուականութեանն հայոց. ՅՂԸ. (398) տառապանաց մերոց»[30]: Իրերի այս վիճակը շարունակվում է մինչև 958 թ., երբ մահանում են Սյունյաց Հակոբ եպիսկոպոսն ու Աղվանից Գագիկ կաթողիկոսը: Անխոնջ կաթողիկոսը, հանուն Հայոց եկեղեցու ամբողջականության, 959 թ. երրորդ այցն է կատարում Սյունիք[31]: Նրան դիմավորում են նախկինում բանադրված Ջևանշեր[32] իշխանը և Սյունյաց Սմբատի որդի գահերեց իշխան Վասակը[33]: Հակոբի մահից հետո Սյունիքում, ամենայն հավանականությամբ, անորոշ վիճակ էր ստեղծվել, քանի որ Անանիա կաթողիկոսը որոշ ժամանակ մնում է Կապանում, հանդարտեցնում իրավիճակը, կարգավորում թեմի կարգավիճակի խնդիրները: Անանիան Սյունյաց նոր առաջնորդ է ձեռնադրում Վահանին, ով Ջևանշիրի որդին էր և Վահանավանքի միաբանության հովիվը: Դատելով կատարած գործերի ծավալից՝ Անանիան տնական ժամանակ մնացել է Սյունիքում և Վահանի ձեռնադրությունը կատարել 961 թ.[34]: Կաթողիկոսը երդման և հավատարիմ հպատակության երկարաշունչ գիր է վերցնում Վահանից և Սյունյաց իշխաններից: Դրանց իմաստն այն էր, որ նրանք այսուհետ երբեք չպետք է շեղվեին հայ եկեղեցու նվիրապետական կարգից և գնային խոտոր ճանապարհով[35]: Երդմնագիրն ավարտվում է սոսկալի նզովքներով. «Զի մի ոք իշխեսցէ յեպիսկոպոսաց զՅակոբայն գործել կամ խոկալ կամ խորհել ոճիրս. և զի մի ոք յիշխանաց իշխեսցէ այնպիսւոյն թեկն ածել և օգնական կամ ջատագով լինել. և եթէ յանդգնի ոք յեպիսկոպոսաց՝ փութապէս ի ձեռս տացեն կաթողիկոսին Հայոց և մի լիցին դարան և ասպնջական նմա»[36]:

---

[30] *Նույն տեղում, էջ 139: Հմմտ. Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 207:*

[31] *Տե՛ս Մ. Օրմանյան. նշվ. աշխ., սյունակ 1275: Մեծանուն պատմաբան Ն. Ադոնցը ավելի ստույգ է համարում 956 թ. (տե՛ս Ն. Ադոնց. Երկեր, հ. Բ, Երևան, 2006, էջ 322):*

[32] *Իր հայտնի թղթում Անանիան Ջևանշիրին անվանում է «Բաղաց բռնակալ» (տե՛ս Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 141):*

[33] *Վասակ Ջ իշխանը գահակալել է մոտ 958–963 թթ. (տե՛ս Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 17, հմմտ. Հր. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 49:*

[34] *Տե՛ս Մ. Օրմանյան. նշվ. աշխ., սյունակ 1276:*

[35] *Տե՛ս Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 141–144: Ստ. Օրբելյանը երդմնագրի ամբողջական բովանդակությունը ավելորդ է համարում մեջբերել՝ ասելով, որ այդ գրությունները ամբողջությամբ կան «Գիրք թղթոցում», որը կազմել է Անանիան՝ «Հավատո նամակ» անունով (տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 208):*

[36] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 208:*

Սակայն կաթողիկոսը չի բավարարվում սոսկ հավատարմության գրով, ևս մեկ նախազգուշական և պատժիչ գործողություն է ձեռնարկում. նա Սյունյաց աթոռը զրկում է նախկինում վայելած պատիվներից, որոնք էին «զիսաչն որ զառաջն տանէին, և զգաւազանն բազմածախ և մեծագին, և զբազմականն ոսկեթել զորս ընդ ինքեանց շրջեցուցանէին, զսահմանեալն յառաջին թագաւորաց և ի հայրապետաց Հայոց»[37]: Որպես Հայ եկեղեցու բարձրապատիվ աթոռներից մեկը՝ Սյունյաց եպիսկոպոսությունը հիշյալ առանձնաշնորհումները ստացել էր դեռևս 607 թ. Դվինի եկեղեցական ժողովում Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի (607–615) ձեռամբ[38]:

Ի վերջո, հայոց եռանդուն և բազմափորձ հայրապետին հաջողվում է վերջ դնել տասնամյակներ շարունակվող հայ եկեղեցու երկփեղկվածությանը և վերահաստատել սահմանված նվիրապետական կարգը: Անթաքույց ուրախությամբ և առանց ավելորդ բառերի այս մասին պատմում է Ստ. Օրբելյանը՝ արձանագրելով, որ վերացավ եկեղեցու մեծ խռովությունը և խաղաղություն եղավ «կեղեքեալ և տառապեալ ազգիս Հայոց», խոտորվածներին վերստին միավորեց և հանձնեց սուրբ Լուսավորչի գահի ժառանգորդների տնօրինությանը[39]:

Հայ մատենագիրներից ոմանք և նրանց հետևողությամբ որոշ ուսումնասիրողներ հակված են Հակոբ եպիսկոպոսի քայլերը մեկնաբանել զուտ դավանանքային տեսանկյունից՝ ասելով, որ նա շեղվել էր հայ եկեղեցու ճշմարիտ վարդապետությունից և հարել էր քաղկեդոնականությանը[40]: Այս մեղադրանքի առաջին հեղինակը հենց Անանիա Մոկացին է, ով իր նշանավոր աշխատության ընդարձակ ու մանվածապատ ներածականում Սյունիքում և Աղվանքում խաթարված մթնոլորտի պատճառ է համարում քաղկեդոնական աղանդը, սակայն չի բերում հիմնավոր փաստեր: Մեր կարծիքով՝ խնդիրը պետք է քննել առա-

---

[37] *Նույն տեղում:*

[38] *Տե՛ս Վ. Ա ղ ե ք ս ա ն յ ա ն. Սյունյաց եպիսկոպոսական աթոռը VII դարի առաջին կեսին.– «Բանբեր Երևանի համալսարանի», Հասարակական գիտություններ, 2010, -1, էջ 38: Վ. Հացունին, ով Սյունյաց աթոռի մետրոպոլիտական կարգավիճակ ունենալն անհիմն համարում է Սյունյաց պատմիչի «սովորական մեծամտությունը», գտնում է, որ Սյունյաց աթոռը մետրոպոլիտական պատիվը ստացել էր Աղվանքի կաթողիկոսներից, այսինքն այն ժամանակ, երբ Հակոբը սկսել էր ձեռնադրություն և մեռոն ստանալ Աղվանքի կաթողիկոսությունից, այն է՝ 930-ական թվականներին (տե՛ս Վ. Հ ա ց ո ւ ն ի. Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենեն, Վենետիկ, 1927, էջ 283–285):*

[39] *Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 209:*

[40] *Մ. Չամչյանցը գրում է, որ Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը հարում էր Թոնդրակեցիների աղանդին (տե՛ս Մ. Չ ա մ չ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 828):*

ջին հերթին Հայաստանում ընթացող քաղաքական իրադարձությունների ետնախորքում:

X դարում Բագրատունյաց թագավորների ջանքերը՝ ամբողջ Հայաստանը միավորել մեկ միասնական կենտրոնացված պետության շրջանակներում, բախվում էին ներքին և արտաքին ուժերի դիմադրությանը: Զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում բոլոր երկրներում գերիշխող են եղել ավատատիրական մասնատվածությունը և կենտրոնախույս ձգտումները: Նույն օրինաչափություններին ենթակա էր նաև Հայաստանը: Իրար ետևից ձևավորվեցին Վասպուրականի (908 թ.), Վանանդի (963 թ.), Տաշիր-Զորագետի (978 թ.) թագավորությունները: Քաղաքական մասնատվածության պայմաններում նպաստավոր հող էր ստեղծվել նաև հայ եկեղեցու տրոհման ու թեմերի ինքնուրույն գործելու համար: Քաղաքականապես ուժեղ և խոշոր նահանգների եպիսկոպոսական աթոռները սկսում էին հանդես բերել անջատողական նկրտումներ: Շատ հաճախ այս քայլերը խրախուսվում և օժանդակություն էին ստանում հարևան պետությունների եկեղեցիների կողմից: Բնականաբար, հարևան երկրներից ներթափանցել են տարբեր աղանդներ[41]: Աղանդավորները ինչ-ինչ գործեր ձեռնարկել են, փորձել ձևավորել սեփական հոգևոր համայնքներ, սակայն դրանք ընդունելություն չեն գտել Սյունյաց աշխարհում, հետևաբար, Հակոբ Ա-ն չի հարել որևէ աղանդի: Այս կարծիքը հաստատվում է այն փաստով, որ Հակոբ Ա եպիսկոպոսը, ունենալով Սյունյաց իշխանների զորակցությունը, ինքն է դաժանորեն ճնշել Տաթևի վանքի մերձակա գյուղերի բնակիչների ապստամբությունը: Վանքից ոչ հեռու՝ Ավելադաշտ բարձունքի վրա, գտնվում էր ոճրագործներով լցված մի ավազականոց, որը անհանգստություն էր պատճառում միաբաններին ու շրջակայքին: Զենքի ուժով արտաքսելով նրանց այդ հողակտորներից՝ Հակոբը դրանք սեփականում է հոգուտ վանքի: Ահա թե ինչ է գրում այդ մասին Ստ. Օրբելյանը. «Յայնժամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց և հրաման առեալ՝ հալածական արար զարսն, քանդեալ աւերեաց զապստամբանոց նոցին և հիմնախիլ արար, և զտեղին սահմանովն սեպհականեաց եկեղեցւոյն, և մեծամեծ և ահագին նզովիւք փակեաց, զի մի ոք այլ իշխեսցէ անդ բնակիլ կամ շինութիւն առնել»[42]:

Այս շրջանում քաղաքական մասնատվածության պայմաններում Հայոց կաթողիկոսությունը չուներ մշտական աթոռանիստ: Հայոց կաթողիկոսները բառացիորեն թափառական էին, գավառից գավառ էին

---

[41] *Այս շրջանում առավել մեծ վտանգ էր ներկայացնում թոնդրակեցիների աղանդը (տե՛ս Ն. Ադոնց. Երկեր, Զ, Հանրագիտարանային հոդվածներ, Երևան, 2012, էջ 345):*

[42] *Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԽԸ, էջ 188:*

անցնում, վանքից վանք, և իրենք էլ չգիտեին, թե որտեղ են հայտնվելու հաջորդ օրը[43]: Այս թափառումների մասին հավաստի տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը[44]: Նույն փախստական ճակատագիրն են ունեցել վերջինիս նախորդած և հաջորդած կաթողիկոսներ Գևորգ Գառնեցին (877–897 թթ.), Մաշտոց Եղիվարդեցին (897–898 թթ.), Ստեփանոս Բ Ռշտունին (929–930 թթ.), Թեոդորոս Ա Ռշտունին (930–941 թթ.)[45]: Այսպիսի պայմաններում ինչպե՞ս կարող էր և որտե՞ղ պետք է ներկայանար Սյունյաց եպիսկոպոսը, ստանար մեռոն և ձեռնադրություն, հայտներ իր հպատակությունը: Իրականում Հակոբ եպիսկոպոսին Անանիա Մոկացի կաթողիկոսը հալածում էր ոչ թե թոնդրակեցիներին կամ քաղկեդոնականներին հարելու, այլ մեռոնը Աղվանքից ստանալու և տասանորդը հայրապետական աթոռին չվճարելու համար[46]:

Մյուս կողմից, ինչպես վերը նշեցինք, չպետք է անտեսել քաղաքական գործոնը. Հակոբի կենտրոնախույս նկրտումները պայմանավորված էին Սյունյաց նահանգի այն հատուկ դերով ու դիրքով, որ նա կատարում էր Հայաստանի քաղաքական ու տնտեսական ասպարեզներում: Սյունիքը առանձին թագավորության ստեղծման շեմին էր, մնացել էր ընդամենը մի քանի տարի, որ Սյունյաց գահերեց իշխանը բազմեր թագավորական գահին: Իր հերթին փառասեր Հակոբ Ա եպիսկոպոսը, հավանաբար, երազում էր ձեռք բերել Հայաստանի հոգևոր առաջնորդի գավազանն ու աթոռը[47]: Այսինքն՝ եկեղեցու կենտրոնախույս քաղաքականություն վարելը պայմանավորված էր աշխարհիկ իշխանության քաղաքականությամբ:

Հակոբ Ա եպիսկոպոսի գործի լուսաբանումը միակողմանի և թերի կլինի, եթե չանդրադառնանք նրա շինարարական, տնտեսական հսկայածավալ գործունեությանը, որի արդյունքը Սյունյաց աշխարհում վանքերի և եկեղեցիների ծաղկումն ու շենացումն էր, եկեղեցական սեփականության ավելացումը: Սկզբնաղբյուրները վկայում են, որ նա եղել է եկեղեցական գործի հմուտ կազմակերպիչ: Նրա կազմակերպչական եռանդուն գործունեության շնորհիվ կարգավորվել է Սյունյաց թեմի հոգևոր կյանքը, կանոնավորել հոգևոր դասը, աշխուժացել թեմի տնտեսական կյանքը, և եկեղեցին դարձել է մեծ կարողության տեր:

X դարի առաջին տասնամյակներին Սյունյաց եպիսկոպոսարանը Հայաստանի ավատական խոշոր կազմակերպություններից մեկն էր: Տիրանալով Տաթևի վանքի շրջակա գյուղերին՝ Սյունյաց եպիսկոպոսները ձեռնամուխ են լինում խոպան հողերի մշակմանը: 932 թ. Հակոբ եպիսկոպոսը բանակցություններ է վարում Փիլիպե 2-րդ գահերեց իշխանի հետ և նրանից 12 հազար

---

[43] *Տե՛ս Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 164:*

[44] *Տե՛ս Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 266–267, 272–273, 280–281:*

[45] *Տե՛ս նույն տեղում, էջ 164–165:*

[46] *Տե՛ս Գ. Գրիգորյան. Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIV դարերում, Երևան, 1973, էջ 228:*

[47] *Տե՛ս նույն տեղում:*

դրամով ու մեկ «մեծագին գոհարով» գնում է Վարարակի ակունքը[48]: Կառուցելով մոտ 29 կմ երկարություն ունեցող Վարարակի ջրանցքը՝ ոռոգելի է դարձնում Որոտան գետի ձախ ափին գտնվող Ցաքուտ անունով խոպան դաշտի, այնտեղ գտնվող եկեղեցու հողերը[49]: Հիրավի, սա շինարարական տեսանկյունից բարդ և վիթխարի ծախս պահանջող ձեռնարկ էր, որը հաջողությամբ ավարտին է հասցնում Հակոբ եպիսկոպոսը: Իր արձանագրության մեջ Փիլիպեն շեշտում է, որ Հակոբը «վճարեաց զամենայն գինն ողջամբ»[50]: Կառուցված ջրանցքի շնորհիվ այդ փշածածկ վայրը դառնում է «վարդուտ»: Այդ առթիվ Ստ. Օրբելյանը հիացմունքով արձանագրում է. «Տնկեաց (Հակոբ եպիսկոպոսը – Վ. Ա.) բազում այգիս և որթս սորեկս, էարկ տունկս զանազան պտղաբերաց՝ ձիթենիս և թզենիս և նռենենիս և յամենայն մրգաբերաց արար դրախտս զարմանալիս, և զարդարեալ զբոլոր վայրն ընդարձակագոյն թանձրախիտ ծառովք և քաջուղէշ որթովք ի վայելումն եղբայրութեանն և ի պէտս ամենայն կարօտելոց և աղքատաց»[51]: Կարևորելով իր կառուցած ջրանցքի նշանակությունը՝ Հակոբ եպիսկոպոսն արձանագրության մեջ սահմանում է նաև ջրանցքից օգտվելու կարգը և նշում շրջակա այն գյուղերի անունները, որոնք իրավունք չունեն օգտվել վանքապատկան ջրանցքից. «Եւ չկայ այս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Խոտանեցեաց, ոչ Շնհէրացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կտրել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի ջուր տալ՝ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ»[52]: Այս որոշումը ուժի մեջ է մնում նաև Հակոբից հետո պաշտոնավարած առաջնորդների օրոք:

Տեր Հակոբը շինարարական գործունեություն է ծավալում նահանգի տարբեր գավառներում, բայց եկեղեցաշեն գործունեության առանձնահատուկ ասպարեզ է դառնում Վայոց Ձորը՝ Սյունիքի իշխանանիստ կենտրոններից մեկը: 929 թ. Վայոց Ձոր գավառում՝ Եղեգիսի հովտում՝ Ոստինք գյուղից քիչ վերև, Հակոբը Սյունյաց իշխանաց իշխան Սմբատի և նրա տիկին Սոփիայի աջակցությամբ ձեռնարկում է եկեղեցու շինարարություն[53]: Տեղանքը շատ հարմար էր և անվտանգ: Եկեղեցին զարդարում է զանազան երանգներով ու գեղեցիկ պատկերներով «և կոչէ զՍմբատ և զՍահակ ի նաւակատիս տաճարին»[54]:

---

[48] *Դա այժմյան Գորիս քաղաքի Ակներ կոչված վայրից բխող ջուրն է, որ թափվում է Որոտան գետը (տե՛ս Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 112, հմմտ. Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի պատմություն, էջ 475, ծան. 734):*

[49] *Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԽԸ, էջ 185, տե՛ս նաև՝ Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 112:*

[50] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, էջ 187:*

[51] *Նույն տեղում, էջ 185:*

[52] *Նույն տեղում, էջ 186, 187: Հայաստանի բնակլիմայական պայմաններում ջուրը միշտ էլ եղել է կենսական խնդիր: Ըստ հիշատակությունների՝ ջրօգտագործման համար միջնադարյան Հայաստանում եղել են վեճեր ու կռիվներ (տե՛ս Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 114, ծան. 357):*

[53] *Դա Շատիկի վանքն է՝ կառուցված Հակոբ Ա-ի կողմից: Այստեղ նա նաև մեկ եկեղեցի է կառուցել, որը վերակառուցվել ու իր վերջնական տեսքն է ստացել 1665 թ.: Այդ եկեղեցին ներկայումս կանգուն Ս. Սիոն եկեղեցին է (տե՛ս Ա. Մ կ ր տ չ յ ա ն. Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995, էջ 81):*

[54] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիւնեաց, էջ 188–189:*

Սյունյաց իշխանը նորակառույց հաստատությանն է նվիրաբերում բավականաչափ կալվածքներ, ծաղկանոցներ և արտեր:

X դարի կեսերին Սյունյաց լեռներում կային բազմաթիվ ճգնավորներ, որոնք բնակվում էին քարայրներում ու ծերպերում: 936 թ. իր գահանիստ Եղեգիս գյուղաքաղաքի շրջակայքում որս անելիս Սմբատ իշխանը Քարեվանքի մոտ հանդիպում է ճգնավորների՝ «ղօղեալ ի ծերպս»: Հակոբ եպիսկոպոսի միջնորդությամբ Սմբատն ու իր տիկին Սոփիան նրանց համար կառուցում են եկեղեցի՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի անվամբ: Նախկին ճգնավորների համար հիմնադրվում է վանական նոր միաբանություն: Սոփիա իշխանուհին նորակառույց Հերմոնի վանքին նվիրատվություններ է անում, ընծայում հասութաբեր հաստատություններ. «Եւ բարեպաշտ տիկինն Սոփիա գնէ զգիւղն Հաւու, որ հանդէպ վանիցն կայ իւր սահմանովն՝ և տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, և այլ ևս այգիս և ծաղկոցս յԵղեգիս: Եւ կոչեն զտեղին յանուն ծերոյն Ահերմոնի վանք»[55]: Հարկ է նշել, որ այս վանքի նշանավոր միաբանները մեծ դեր խաղացին 1441 թ. հայոց կաթողիկոսական աթոռը Կիլիկիայից Էջմիածին փոխադրելու գործում:

Ճգնակյացների մի մեծ խումբ էլ ծվարել էր Գնդեվանք կոչված անմատչելի ձորերում: Նրանք ամբարել էին սուրբ նահատակների մեծաթիվ նշխարներ և հրաշագործություններ էին կատարում՝ բժշկելով անբուժելի համարվող հիվանդներին: Իշխանուհի Սոփիայի հանձնարարությամբ տեր Հակոբը 936 թ. ձեռնարկում է նոր վանքի շինարարությունը: Ահա թե ինչ է պատմում այդ մասին Ստ. Օրբելյանը. «Կանգնէ զտունն Աստուծոյ և նկարակերտ յօրինուածովք զարդարեն զառաստաղս և զորմունս նորա. և արարեալ նաւակատիս՝ մեծահանդէս ժողովով օրհնեն զնա և անուանեն անուանակոչութեամբ սուրբ վկայիցն. և կացուցանեն ի նմա դասս պաշտօնէից և բազմութիւն կրօնաւորաց»[56]: Վանքն անվանվում է Գնդեվանք, որի վերակացուն Սահակ քահանան էր, գործակալը՝ Եղիշա նկարիչ քահանան, իսկ ընդհանուր հոգաբարձությունը վարել է Հակոբ եպիսկոպոսը: Գնդեվանքի սքանչելի եկեղեցու կառուցման կապակցությամբ Սոփիա տիկինը փորագրել է տալիս հատուկ արձանագրություն, որն ավարտվում է հետևյալ պերճախոս համեմատությամբ. «Մատանի էր անակն Վայոց ձոր, – շինեցի զսա և եդի ակն ի վերայ»[57]: Ինչպես նախորդ վանքերի և եկեղեցիների դեպքում, այստեղ նույնպես աշխարհիկ իշխանությունները հոգ են տանում եկեղեցու տնտեսական կարիքների համար, և Սոփիա տիկինը վանքին է նվիրում բավարար չափով շարժական ու անշարժ գույք՝ ազատելով դրանք հարկերից և տուրքերից:

Նկատենք, որ Հակոբ Ա եպիսկոպոսի նշանավոր ձեռնարկներից մեկն էլ 930 թ. Տաթևի մայր եկեղեցու վերանորոգումն էր և վերջինիս նոր շուք հաղորդելը: Այս գործի համար նա ոչինչ չխնայեց և, հսկայական ծախսեր կատարելով, հեռավոր երկրներից հրավիրեց «ֆռանգ ազգաւ» նկարիչների ու ճարտարապետների: Վերջիններս ամբողջությամբ վերանորոգեցին և նորովի նկարազարդեցին տաճարը. «Նմանապէս և զբոլորն համակ զարդարեաց այնքան, զի

[55] *Նույն տեղում, էջ 189–190:*
[56] *Նույն տեղում, էջ 190:*
[57] *Նույն տեղում, էջ 191:*

տեսողաց տեսարանքն շլանային ի նայելն. և երբէք ոչ թուէր ի դեղոց և յերանգոց յօրինեալ, այլ համայն կենդանիք, յորոց զարհուրեալք խուսափէին տեսողքն»[58]: Կատարված գործն այնքան նշանակալից էր, որ Հակոբ Ա եպիսկոպոսը երկրորդ նավակատիք կազմակերպեց[59]: Այն իր ճոխությամբ գերազանցեց առաջինին: Պատկերները սրբագործելու և օրհնելու համար վանքի նավակատիքին հրավիրեց հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն: Վերջինս բազմաթիվ եպիսկոպոսներով ու իշխաններով ներկա գտնվեց մեծաշուք հանդեսին:

Այսպիսով՝ փաստերի հանգամանալի և համակողմանի քննությունը թույլ է տալիս իրական լույսի ներքո գնահատել X դարի Սյունյաց աթոռի նշանավոր առաջնորդներից մեկի՝ Հակոբ Ա եպիսկոպոսի գործունեությունը: Թե՛ իր կրոնադավանաբանական, թե՛ շինարարական-կազմակերպական գործունեությամբ տեր Հակոբը մեծ դեր է կատարել Սյունիքի եպիսկոպոսության ամրապնդման և ուժեղացման գործում: Նախաձեռնել է եկեղեցական մեծածավալ շինարարություն՝ Սյունիքը հարստացնելով հոգևոր-մշակութային ու կրթական նորանոր հաստատություններով և հող է նախապատրաստել հետագա շրջանի Սյունյաց հանրահռչակ հոգևոր-կրթական հաստատությունների ձևավորման համար:

О ДЕЯТЕЛЬНОСТИ ЕПИСКОПА АКОПА I СЮНИКСКОГО (918—958 гг.)

ВАРДАН АЛЕКСАНЯН

Резюме

Епископ Акоп Сюникский — один из знаменитых духовных предводителей Сюникской епархии X века, названный армянскими историографами «мятежником» и «еретиком». Его усердная и плодотворная деятельность способствовала развитию и усилению Сюникского епископата. Согласно средневековым армянским письменным источникам, в период его предводительства (918—958 гг.)

[58] *Նույն տեղում, էջ 187:*

[59] *Տաթևի վանական համալիրի շինարարությունը նախաձեռնել և ավարտին է հասցրել Սյունյաց Հովհաննես Ե եպիսկոպոսը (885–918): 895 թ. սկսում է Տաթևի մայր տաճարի՝ Պողոս-Պետրոսի կառուցումը: Շինարարությունը տևում է 11 տարի և ավարտվում 906 թ.: Զուգահեռաբար կառուցվում են գրատներ, սրբատներ, գետնափոր գաղտնարաններ, սեղանատներ: Տաճարի նավակատիքին առատ ընծաներով մասնակցում են Հայոց երկրի աշխարհիկ և հոգևոր բոլոր տերերը՝ Սմբատ Ա-ի (890–914) և Հովհաննես Դրասխանակերտցի (898–929) կաթողիկոսի գլխավորությամբ [տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, գլ. ԼԹ, էջ 165, Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը (IX–XIV դարեր).– ՊԲՀ, - 2–3, 1999, էջ 167]:*

временно прервалась связь между армянским патриаршеским и Сюникским престолами. Прерывание отношений было обусловлено политическими и экономическими факторами, которые имели место в Багратидской Армении в X веке. После длительных переговоров Католикосу Армении Ананиа Мокаци (946—968 гг.) удалось наладить и восстановить прежние иерархические отношения между двумя престолами. Особенно плодотворной была деятельность епископа Акопа в области церковного строительства. Он обогатил Сюникскую область новыми великолепными монастырями и церквами. Сюникская церковь укрепила свое положение, став собственником огромных имений. Новые монастыри и церкви стали духовно-культурными и образовательными центрами для всей Армении. Эти заведения подготовили почву, на которой в будущем сформировались прославленные сюникские средневековые школы.

ON BISHOP HAKOB I SYUNETSI'S ACTIVITIES (918–958)

VARDAN ALEXANYAN

S u m m a r y

Bishop Hakob Syunetsi is one of the famous religious leaders of the Syunik eparchy of the 10th century, named by the Armenian ecclesiastical historiographers "insurgent"and "heretic". His assiduous and fruitful activities promoted developing and strengthening the Syunik episcopate. According to medieval Armenian written sources during his reign (918–958) the relations between the Syunik and the Armenian partriarchal thrones were temporarily broken off. The break of the relations was connected with political and economical factors which existed in the Bagratid Armenia in the 10th century. After long negotiations Armenian Catholicos Anania Mokatsi (946–968) succeeded in arranging the situation and rehabilitated the former hierarchic relations between two thrones. Bishop Hakob's activities was especially fruitful in church constructing. He enriched the Syunik region with luxurous monasteries and churches. The Syunik church strengthened its position, becoming the owner of great possessions. New monasteries and churches became religious-cultural and educational centres for Armenia. These manuals paved the way for forming in the future famous medieval institutions of Syunik.